

Բաքվի կողմից «Աղվանական նախագծի» հաստատութենականացումը ԱՌՎԱԿ կենտրոնի մեկնաբանությունը, 21.02.2026 թ.¹

Անտրագիա

ԱՌՎԱԿ-ը դիտարկում է Ադրբեջանի կրոնական դավանանքների պատվիրակության այցը Վարիկան (2026 թ., փետրվար) և «աղվանա-ուրիական համայնքի» ղեկավար Ռոբերտ Մոբիլի առաջին պաշտոնական ընդունելությունը Հռոմի Պապ Լեո XIV-ի մոտ: Այս քայլը վերլուծվում է որպես միջազգային մակարդակով «Աղվանական ինքնանկախ եկեղեցու» հաստատութենականացման և օրինականացման Բաքվի երկարաժամկետ ռազմավարության փուլ: Հետազոտվում է «Հեյդար Ալիևի հիմնադրամի» և Սուրբ Աթոռի միջև ֆինանսա-մարդասիրական համագործակցության դերն ադրբեջանական պատմական խոսույթների առաջնության գործում, ինչպես նաև Հայ Առաքելական եկեղեցու սուբեկտայնության համար ռիսկերը Հայաստանում առկա ներքաղաքական ճգնաժամի և Հռոմեական կուրիայի պասիվ դիրքորոշման համապարկերում:

Բանալի բառեր. Վարիկան, Ադրբեջան, Հռոմեական կուրիա, Լեոն XIV, Կովկասյան Աղվանք, աղվանա-ուրիական եկեղեցի, Հայ Առաքելական եկեղեցի, մշակութային ունեցրկում, միջկրոնական երկխոսություն, «Հեյդար Ալիևի հիմնադրամ»:

Ադրբեջանի կրոնական դավանանքների ներկայացուցիչների պատվիրակությունը «Կովկասի մահմեդականների վարչության» (ԿՄՎ) ղեկավար շեյխ-ուլ-իսլամ Ալլահշուքյուր Փաշազադեի գլխավորությամբ 09.02.2026 թ. այցելել է Վատիկան: Այցի ընթացքում տեղի է ունեցել պատվիրակության հանդիպումը Հռոմի Պապ Լեո XIV-ի հետ, որի ընթացքում, ըստ ադրբեջանական կողմի մամուլ հաղորդագրությունների, քննարկվել են միջկրոնական երկխոսության խորացման, Վատիկանի և Ադրբեջանի Հանրապետության միջև կապերի ամրապնդման, «հայ-ադրբեջանական խաղաղ օրակարգի» հարցերը, ինչպես նաև հաղորդվել են բազմամշակութայնության, հանդուրժողականության և կրոնական ազատությունների ոլորտում Բաքվի ձեռքբերումների մասին թեզեր:

Ա. Փաշազադեն կաթոլիկ հովվապետին փոխանցել է Ադրբեջանի նախագահ Իլիամ Ալիևի և փոխնախագահ Մեհրիբան Ալիևայի ողջույնները: Ադրբեջանի կրոնական դավանանքների խորհրդատվական մարմնի անունից Սուրբ Աթոռի ղեկավարը հրավեր է ստացել 2027 թ. այցելել Բաքու՝ Ադրբեջանի և Վատիկանի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 35-ամյակի, ինչպես նաև Հռոմի Պապ Հովհաննես Պողոս II-ի հետ Հեյդար Ալիևի առաջին հանդիպման 30-ամյակի կապակցությամբ:

Հարկ է նշել ադրբեջանական պատվիրակությունների՝ Վատիկան կատարած այցերի համակարգային բնույթը՝ կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչների ներգրավմամբ: Նման այցելություններ իրականացվել են 2005 թ. սեպտեմբերին (Բենեդիկտոս XVI-ի օրոք), 2022 թ. հունվարին (Ֆրանցիսկոսի օրոք) և 2025 թ. նոյեմբերին՝ Լեո XIV-ի գահակալությունից անմիջապես հետո: Շփումների դինամիկան

¹ Նյութի բնօրինակը (ռուս.) հրապարակվել է մեր կայքէջում 20.02.2026 թ.:

վկայում է այն մասին, որ Վատիկանն աշխուժորեն օգտագործում է միջկրոնական փոխգործակցության ձևաչափը՝ Ադրբեջանի ղեկավարության հետ քաղաքական-դիվանագիտական համագործակցությունը պահպանելու համար:

2005 թվականից Ալիևների զույգը պաշտոնական և աշխատանքային ձևաչափերով պարբերաբար այցելել է Վատիկան: Այդ փոխգործակցության տնտեսական հիմքը Մեհրիբան Ալիևայի ղեկավարած «Հեյդար Ալիևի հիմնադրամի» գործունեությունն է: Ադրբեջանական կողմը ֆինանսավորել է հռոմեական կատակոմբների, վատիկանյան առանձին սրբավայրերի վերականգնման և Հռոմեական կուրիայի պատմական փաստաթղթերի թվայնացման ծրագրերը: Այդ համագործակցության նշանակալի արդյունքներից մեկը 2016 թ. հոկտեմբերին Հռոմի Պապ Ֆրանցիսկոսի այցն էր Ադրբեջան և նրա կողմից Բաքվի Սուրբ Մարիամ կաթոլիկ եկեղեցում պատարագի մատուցումը:

Հաշվի առնելով փոխգործակցության ձևավորված պրակտիկան՝ պատվիրակության վերջին այցը մանրամասն վերլուծության առարկա չէր դառնա, եթե չլիներ մեկ էական հանգամանք:

Առաջին անգամ պաշտոնական պատվիրակության կազմում ընդգրկվել է Ռոբերտ Մոբիլին, ով ներկայանում է որպես Ադրբեջանի «աղվանա-ուտիական եկեղեցու» ղեկավար: Ավելի վաղ՝ 2025 թ. ապրիլին, Մոբիլին այցելել էր Հռոմ՝ մասնակցելու Կովկասյան Աղվանքի ժառանգությանը նվիրված գիտաժողովին, որն ադրբեջանական իշխանությունները կազմակերպել էին Պապական Գրիգորյան համալսարանում: Այնուամենայնիվ, այն ժամանակ նա անմիջական շփումներ չունեցավ Պապական կուրիայի հիերարխների և, առավել ևս, կաթոլիկ հովվապետի հետ: Լեո XIV-ի կողմից ընդունելությանն արժանացած պատվիրակության կազմում Ռ. Մոբիլիի ներկայիս ընդգրկումը, փաստորեն, նշանակում է նրա պաշտոնական ներկայացում Սուրբ Աթոռին:

Տվյալ իրադարձությունը, ըստ էության, Վատիկանին մի գործչի ներկայացումն է առաջին անգամ, ով կոչված է մարմնավորելու Բաքվի կողմից առաջ քաշվող «Աղվանական ինքնանկախ եկեղեցու» «վերածննդի» հայեցակարգը: Ադրբեջանական ԶԼՄ-ների հաղորդումների համաձայն, կաթոլիկ հովվապետի հետ զրույցի ընթացքում Մոբիլին ուշադրությունը կենտրոնացրել է «աղվանա-ուտիական ժառանգության» պահպանման անհրաժեշտության վրա և Լեո XIV-ին է փոխանցել նկարագարող հրատարակություն, որտեղ պատկերված են այն օբյեկտները, որոնք ադրբեջանական պատմագրությունը վերագրում է «Կովկասյան Աղվանքի ժառանգությանը»: Ակնհայտ է, որ այս եզրույթով նկատի են առնվում Արցախի հայկական տաճարային համալիրներն ու պատմամշակութային հուշարձանները:

ԱՌՎԱԿ կենտրոնը 07.05.2025 թ. [հրապարակման](#) մեջ («Բաքուն «աղվանա-ուտիական եկեղեցու» ինքնանկախության որոնման մեջ») մանրամասն դիտարկել է «*հին աղվանական եկեղեցու*» սուբյեկտայնությունը վերականգնելու գաղափարի լրբբինգի մեխանիզմները: Բաքուն ձգտում է հասնել նրա ինքնանկախության (պատրիարքության կամ

կաթողիկոսության կարգավիճակով) ճանաչմանն աշխարհի խոշորագույն քրիստոնեական կենտրոնների՝ Հռոմեական կուրիայի և Կոստանդնուպոլսի Տիեզերական պատրիարքության կողմից: Այս կառույցը նախատեսվում է ստեղծել Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմի հոգևոր-նյութական ժառանգության հիմքի վրա:

Առկա տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ, ի տարբերություն Կոստանդնուպոլսի, Սուրբ Աթոռը որոշակի բարեհաճություն է ցուցաբերում Հայոց Եկեղեցու կողմից աղվանական սրբավայրերի «պատմական ունեզրկման» և տարածաշրջանի հոգևոր պատմության «խեղաթյուրման» մասին աղբյուրների թեզերին: Այս միտման ապացույցներն են ինչպես վերոհիշյալ գիտաժողովը Գրիգորյան համալսարանում, այնպես էլ նմանատիպ ուղղվածության մի շարք հոդվածների հրատարակումը Վատիկանի *L'Osservatore Romano* պաշտոնական պարբերականում 2024 թ. հուլիսին:

Բացի այդ, Աղբյուրների ուտիական համայնքի ներկայացուցչական կառույցները երիտասարդներին ակտիվորեն ուսման են ուղարկում Եվրոպայի կաթոլիկ ճեմարաններ (մասնավորապես՝ Լեհաստան): Այս փաստերը թույլ են տալիս ենթադրելու, որ Հռոմի կուրիան, ձեռնպահ մնալով «աղվանական եկեղեցու» ճանաչմանն ուղղված պաշտոնական իրավական քայլերից, գործնականում նպաստում է պայմանների ստեղծմանը համաշխարհային քրիստոնեական համայնքում «աղվանական օրակարգի» օրինականացման համար: Այն տպավորությունն է ստեղծվում, որ տվյալ սցենարի իրագործումը կախված է ժամանակի գործոնից և Բաքվի՝ բարեգործական ծրագրերի անվան տակ Վատիկանի հետ ֆինանսական փոխգործակցությունը մեծացնելու կարողությունից:

Անհրաժեշտ է նշել նաև, որ հովվապետին Ռոբերտ Մոբիլիի հաստատութենական ներկայացումը ժամանակի առումով համընկել է Հայ Առաքելական Եկեղեցու և Հայաստանի քաղաքական ղեկավարության միջև հարաբերությունների խոր ճգնաժամի հետ: Այս հակամարտությունն իր մեջ կրում է Հայ Առաքելական Եկեղեցու ներհամակարգային պառակտման և քրիստոնեական եկեղեցիների ընտանիքում էջմիածնի Աթոռի դիրքերի թուլացման ռիսկերը: Հազիվ թե պատահական է ՀԱԵ-ին նետված մարտահրավերների հետ «Աղվանա-ուրիական ուղու» վրա Բաքվի աշխուժացման համաժամանակությունը:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի Հայ Առաքելական Եկեղեցու և Ամենայն Հայոց Կաթողիկոսի նկատմամբ գործադրվող քաղաքական ճնշումներին Վատիկանի պաշտոնական արձագանքի բացակայությունը: Տեղի ունեցողի հետ Սուրբ Աթոռի համերաշխության և պաշտոնապես հնչեցվելիք գնահատանքի բացակայությունը հիմնավոր մտահոգություն է հարուցում: Չի կարելի բացառել այն բանի հավանականությունը, որ Հայոց Եկեղեցու առջև ծառայած բազմակողմ մարտահրավերները համակարգային բնույթ ունեն և կարող են կարգավորվել միասնական աշխարհաքաղաքական ռազմավարության շրջանակներում: